

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

1946թ. դեկտեմբերի 11-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան իր 96 (1) բանաձևով հայտարարել է, որ ցեղասպանությունը միջազգային քրեական իրավունքի տեսանկյունից հանցագործություն է և, որ այն հակասում է Միավորված ազգերի կազմակերպության ոգուն ու նպատակներին, իսկ քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է դա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմության ընթացքում իրականացված ցեղասպանության պատճառով մեծ կորուստներ է պատճառվել մարդկությանը և նմանատիպ հանցագործությունների կանխման համար՝ միջազգային համագործակցության շրջանակում 09.12.1948 թվականին ընդունվել է Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիան, իսկ Հայաստանի Հանրապետության համար այն ուժի մեջ է մտել 23.06.1993 թվականին:

Պայմանավորվող կողմերը հաստատել են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար:

Կոնվենցիայի իմաստով ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

- այդ խմբի անդամների սպանությունը,
- այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,
- որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
- այդ խմբի միջավայրում մանկաձնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,
- երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:

Կոնվենցիայի համաձայն պատժելի են հետևյալ արարքները.

- ցեղասպանությունը,
- ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,
- ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,
- ցեղասպանություն կատարելու փորձը,
- հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

Ցեղասպանության վերաբերյալ միջազգային քրեական իրավունքի համար կարևոր նշանակություն ունի նաև «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» 26.11.1968 թվականի կոնվենցիան:

Կոնվենցիան սահմանում է.

Վաղեմության ոչ մի ժամկետ, անկախ կատարման ժամանակից, չի կիրառվում հետևյալ հանցագործությունների նկատմամբ.

- պատերազմական հանցագործությունների, ինչպես դրանք սահմանվել են Նյուրնբերգի Միջազգային ռազմական դատարանի 1945թ. օգոստոսի 8-ի

կանոնադրությամբ և հաստատվել են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1946թ. փետրվարի 13-ի 3 (I) և 1946թ. դեկտեմբերի 11-ի 95(I) բանաձևերով, մասնավորապես, Պատերազմի զոհերի պաշտպանության մասին 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաներում թվարկված «լուրջ խախտումների»,

- մարդկության դեմ ուղղված հանցագործությունների՝ անկախ նրանից, կատարվել են պատերազմի, թե խաղաղ ժամանակ, ինչպես դրանք սահմանվել են Նյուրնբերգի Միջազգային ռազմական դատարանի 1945թ. օգոստոսի 8-ի կանոնադրությամբ և հաստատվել են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1946թ. փետրվարի 13-ի 3(I) և 1946թ. դեկտեմբերի 11-ի 95(I) բանաձևերով, զինված հարձակման կամ բռնազավթման միջոցով արտաքսման և ապարտեիդի քաղաքականության հետևանքով անմարդկային գործողությունների ու ցեղասպանության հանցագործության, ինչպես սահմանված է Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին 1948թ. կոնվենցիայում, եթե անգամ այդ գործողությունները չեն համարվում այն երկրի ներպետական իրավունքի խախտում, որտեղ դրանք կատարվել են:

Սույն կոնվենցիաների կարգավորումները Հայաստանի Հանրապետության համար ունեն առավել կարևոր նշանակություն այն իմաստով, որ Հայաստանի Հանրապետությունը 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության իրականացրած հայերի ցեղասպանության իրավական գնահատական տալու, ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիր ունի իր առջև:

Աղավնի Մադոյան  
ՀՀ փաստաբանների պալատի  
երիտասարդական խորհուրդ